ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## 2020-2022թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (նոյեմբեր ամսվա վերջի դրությամբ)













2022թ.նոյեմբերի 30-ի դրությամբ՝

1) ՀՀ պետական պարտքը կազմել է 4 տրիլիոն 55.8 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 8.4%-ով, 2021թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 8.9%-ով, իսկ 2020 թվականի նոյեմբերի 30-ի նկատմամբ աճելով 0.4%-ով,

2) ՀՀ կառավարության պարտքը կազմել է 3 տրիլիոն 832.4 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 9%-ով, 2021թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 9.3%-ով, իսկ 2020թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ աճելով 1%-ով,

3) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 223.5 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 1.7%-ով, նվազելով 2021թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 1.3%-ով, իսկ 2020թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 8,6%-ով,

4) ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 10 մլրդ 264.8 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 11.3%-ով, 2021թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 12.1%-ով, իսկ 2020թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 29.2%-ով,

5) ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 9 մլրդ 699.2 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 10.6%-ով, 2021թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 11.6%-ով, իսկ 2020թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 29.9%-ով,

6) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 565.6 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 23.6%-ով, 2021 թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 21.3%-ով, իսկ 2020թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 17.5%-ով,

7) ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 2 տրիլիոն 232 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 24.9%-ով, 2021թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 25,7%-ով, իսկ 2020թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 20.5%-ով,

8) ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 1 տրիլիոն 600.4 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 29.3%-ով, 2021թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 31.3%-ով, իսկ 2020թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 62.1%-ով,

9) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 223.5 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 1.7%-ով, նվազելով 2021թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 1.3%-ով, իսկ 2020թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 8,6%-ով,

10) ՀՀ կառավարության արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 5 մլրդ 648.8 մլն ԱՄՆ դոլար, նվազելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 8.8%-ով, 2021թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 8.7%-ով, իսկ 2020թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ աճելով 2.3%-ով,

11) ՀՀ կառավարության ներքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 4 մլրդ 50.4 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 57.2%-ով, 2021թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 61.5%-ով, իսկ 2020 թ նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 108.5%-ով,

12) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 565.6 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 23.6%-ով, 2021թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 21.3%-ով, իսկ 2020թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 17.5%-ով:

ԱԺԲԳ




ՀՀ կառավարության արտաքին պարտքի կառուցվածքն ըստ վարկատուների, %




**ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված տոկոսավճարներ, (մլրդ դրամ, առանց մուրհակների սպասարկման ծախսերի)**




ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված ներքին և արտաքին տոկոսավճարներ, մլրդ դրամ




ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը 2022թ. նոյեմբերի 30-ի դրությամբ կազմել է 4 մլրդ 247.3 մլն ԱՄՆ դոլար, նվազելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 5.2%-ով, 2021թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 5.2%-ով, իսկ 2020թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 7.7%-ով:

2022թ. նոյեմբերի 30-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքում `

1) միջազգային կազմակերպությունների բաժինը կազմել է 79.32%, ինչը ավել է 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից 1.94 տոկոսային կետով, 2021թ. նոյեմբերի 30-ի ցուցանիշից՝ 2.04 տոկոսային կետով, 2020թ. նոյեմբերի 30-ի ցուցանիշից՝ 2.53 տոկոսային կետով,

2) օտարերկրյա պետությունների բաժինը կազմել է 20.37%, ինչը պակաս է 2021թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ 1.88 տոկոսային կետով, 2021թ. նոյեմբերի 30-ի համեմատությամբ՝ 1.97 տոկոսային կետով, իսկ 2020թ. նոյեմբերի 30-ի համեմատությամբ՝ 2.41 տոկոսային կետով,

3) առևտրային բանկերի բաժինը կազմել է 0.31, ինչը պակաս է 2022թ. դեկտեմբերի 31-ի ցուցանիշից՝ 0.06 տոկոսային կետով, 2021թ. նոյեմբերի 30-ի ցուցանիշից՝ 0.07 տոկոսային կետով, իսկ 2020թ. նոյեմբերի 30-ի ցուցանիշից՝ 0.12 տոկոսային կետով:

2022թ. հունվար-նոյեմբերին ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված `

1) տոկոսավճարները կազմել են 195.55 մլրդ դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 17.6 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 34.64 մլրդ դրամով:

2) ներքին տոկոսավճարները կազմել են 125.42 մլրդ դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 17.35 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 38.73 մլրդ դրամով:

3) արտաքին տոկոսավճարները կազմել են 70.13 մլրդ դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 0.25 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 4.09 մլրդ դրամով:

ԱԺԲԳ

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ




Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ




ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար




ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար




2022թ. հունվար-նոյեմբերի պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը՝

1) փոխառու զուտ միջոցների հաշվին կազմել է 193.16 մլրդ դրամ, ինչը պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ 380.16 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 131.01 մլրդ դրամով,

2) ներքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 210.28 մլրդ դրամ, ինչը պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 11.17 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 75.6 մլրդ դրամով,

3) արտաքին փոխառու միջոցների հաշվին կազմել է -17.12 մլրդ դրամ, ինչը պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 368.99 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 55.41 մլրդ դրամով:

ՀՀ կառավարության կողմից 2022թ. հունվար-նոյեմբերին՝

1) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 75.89 մլն դոլար տոկոսավճար, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 9.4%-ով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 19.2%-ով,

2) արտաքին վարկերի սպասարկման նպատակով մարվել է 210.22 մլն դոլարի մայր գումար, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 1.5%-ով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 11.6%-ով,

3) ստացվել են 166.94 մլն դոլարի վարկային միջոցներ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 5.2%-ով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 53.8%-ով,

4) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 286.11 մլն դոլար (տոկոսավճար և մայր գումարի մարում), ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 3.5%-ով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 1.4%-ով:

ԱԺԲԳ

## Պետական պարտատոմսերի ծավալը, մլրդ դրամ




## Պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը, օր




## ՀՀ Կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը, %




## ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը, ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության, %




2022թ. նոյեմբերի 30-ի դրությամբ՝

1) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 1 տրիլիոն 452.3 մլրդ դրամ, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի, 2021թ. նոյեմբերի 30-ի և 2020թ. նոյեմբերի 30-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 243.4, 263.2 և 508.3 մլրդ դրամով,

2) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 3311 օր, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ պակաս է 450 օրով, 2021թ. նոյեմբերի 30-ի համեմատությամբ պակաս է 527 օրով, իսկ 2020թ. նոյեմբերի 30-ի համեմատությամբ պակաս է 713 օրով:

ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը 2022թ. նոյեմբերի 30-ի դրությամբ կազմել է 6.2%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի համապատասխան ցուցանիշի համեմատությամբ ավել է 1.52 տոկոսային կետով, 2021թ. նոյեմբերի 30-ի համեմատությամբ ավել է 1.56 տոկոսային կետով, իսկ 2020թ. նոյեմբերի 30-ի համեմատությամբ ավել է 1.81 տոկոսային կետով:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության 2022թ. նոյեմբերի 30-ի դրությամբ՝

1) կարճաժամկետ պարտքի բաժինը կազմել է 2.29%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. նոյեմբերի 30-ի համեմատությամբ մեծ է 1.09 տոկոսային կետով, իսկ և 2020թ. նոյեմբերի 30-ի համեմատությամբ մեծ է 1.2 տոկոսային կետով,

2) միջնաժամկետ պարտքի բաժինը կազմել է 12,75%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի, 2021թ. նոյեմբերի 30-ի և 2020թ. նոյեմբերի 30-ի համեմատությամբ մեծ է համապատասխանաբար՝ 3.64, 4.17 և 5.88 տոկոսային կետերով,

3) երկարաժամկետ պարտքի բաժինը կազմել է 84.96%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի, 2021թ. նոյեմբերի 30-ի և 2020թ. նոյեմբերի 30-ի համեմատությամբ փոքր է համապատասխանաբար՝ 4.73, 5.26 և 7.08 տոկոսային կետերով:

ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ
# ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2022-2024 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂԵՆՇԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (2020-2022թթ. նոյեմբեր ամսվա վերջի դրությամբ)

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, տարի




Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով), %




ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի, %




ՀՀ Կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները, %




ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2022-2024թթ. ռազմավարական ծրագրով՝

1) պարտքի մինչև մարում միջին ժամկետի ուղենշային ցուցանիշը սահմանված է 8-11 տարի: ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը 2022թ. նոյեմբերի 30-ի դրությամբ կազմել է 7.79 տարի: Այս ցուցանիշը 2021թ. նոյեմբերի 30-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից պակաս է 0.72 տարով, իսկ 2020թ. նոյեմբերի 30-ի ցուցանիշից՝ 1.07 տարով;

2) առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշռի (պետական գանձապետական պարատոմսերի գծով) ուղենշային ցուցանիշը սահմանավաձ է առավելագույնը 20%: Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով) 2022թ. նոյեմբերի 30-ի դրությամբ կազմել է 12.19%, որը 2021թ. նոյեմբերի 30-ի և 2020թ. նոյեմբերի 30-ի դրությամբ արձանագրված մակարդակներից փոքր է 1.54 և 1.06 տոկոսային կետերով:

3) ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշռի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 80%: ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի 2022թ. նոյեմբերի 30-ի դրությամբ ունեցել է հետևյալ պատկերը. ֆիքսված տոկոսադրույքով՝ 84.11%, լողացող  տոկոսադրույքով՝ 15.89%: Ընդ որում, 2022թ. նոյեմբերի 30-ի դրությամբ արձանագրված Ֆիքսված տոկոսադրույքի ցուցանիշը 2021թ. նոյեմբերի 30-ի ցուցանիշից ավել է 1.12 տոկոսային կետով, իսկ 2020թ. նոյեմբերի 30-ի ցուցանիշից ավել է 3.12 տոկոսային կետով:

4) ներքին պարտքի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 25.%, ՀՀ կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները 2022թ. նոյեմբերի 30-ի դրությամբ ունեցել են հետևյալ պատկերը. արտաքին պարտք՝ 58.24%, ներքին պարտք՝ 41.76%: Ընդ որում, 2022թ. նոյեմբերի 30-ի դրությամբ արձանագրված ներքին պարտքի կշռի ցուցանիշը 2021թ. նոյեմբերի 30-ի և 2020թ. նոյեմբերի 30-ի ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար՝ 12.9 և 15.74 տոկոսային կետերով: